ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 15 հոկտեմբերի 2023թ.

2023 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 15-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպել է «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում խաղահրապարակների կառուցում», «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի, Նուռնուս և Ջրաբեր գյուղերի փողոցների, ճանապարհների, բնակելի շենքերի բակերի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ», «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում ոռոգման համակարգի ներքին ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքներ» սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել է Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ https://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=a100a0e1-8de7-4a85-a36b-e9175ed0da87 հղումով), ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև փակցվել էր Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

Օրակարգում՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում խաղահրապարակների կառուցում»,
2. «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի, Նուռնուս և Ջրաբեր գյուղերի փողոցների, ճանապարհների, բնակելի շենքերի բակերի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ»,
3. «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում ոռոգման համակարգի ներքին ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքներ»

որոշումների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հոկտեմբերի 3-ից մինչև 15-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով կայացած քննարկումների ընթացքում ներկայացված նախագծերի վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից առաջարկություններ և կարծիքներ չեղան:

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում խաղահրապարակների կառուցում», «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի, Նուռնուս և Ջրաբեր գյուղերի փողոցների, ճանապարհների, բնակելի շենքերի բակերի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ», «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում ոռոգման համակարգի ներքին ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքներ» որոշումների նախագծերին հավանություն տալ և գնահատել դրական:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հ. Բալասյան

Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Բ. Դավթյան

Արձանագրող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ավուշյան